

զուստ սորվելու, քանի որ իրենց ըսելիքը միայն կը բաւէ իրենց, լսողներու ներկայութեան) մէկ օրէն միւսը կը հասկնային ու զիրենք մտիկ ընող գիւղացիները իբրեւ խռովարարներու ունկնդիր կը քշէին գազա, քրտնցնելու, կրթելու համար չունեցած իւղը այդ ողորմելիներուն: Մինչեւ հանելուկին պարզումը, ճարուած կաշառքին բաշխումը գիւղը կ'անցընէր անձկութեան իրաւ տագնապներ: Ու մաքրուած, օրին մէկն ալ կը դրուէին ճամբայ, դէպի իրենց բնակարանները, փատիչահին կեանքին արեւշատութիւն մաղթելով բանտի բակէն մինչեւ գազայէն դուրս ելլելին: Այս ամէնը, բոպէական կ'անցնին մտքէս: Անհանգիստ եմ ու անապահով:

Ու կու տամ ականջ:

Մաքուր, տարօրէն պարզ, ընտանի, բնական արեւելահայերէն մը, բաւական տարբեր խոստայն լեզուէն, զոր աւելի յետոյ Պոլիս ու Սփիւռքի մէջ ինծի պիտի տրուէր ունկնդրել: Շեշտի անվրէպ ու անթերի հարազատութեամբ մը, ա'յնքան՝ որ ձայնին մեղմ, մելանուշ ալիքովը մտքիս մէջ կը յօրինուի շերամաբուծարանի մը ստորնայարկ սրահը, կիսամութ, միշտ կուղպ փեղկերով ու ծեծ-լած թիթեռնիկի գարշ հոտովը: Ու այս ամէնուն հետ թաթար հարսնուկը, կաղ Բերովբէ Էֆէնտին -տէրը գործին- դրկից ուրիշ բանուոր սողաք եւ... հասակը Կովկասէն հիւր պատանեակի մը: Հնաբոյժը արտօնուած էր Սեւ ծովու ճամբով, առանց Պոլիս ոտք կոխելու, չոգենաւ առնել Պաթումի համար: Անիկա բերած էր այդ պատանին նիհար, յօդացաւէն գրեթէ ծերացած գիծերով: Բայց նաւթի իշխանի մը թող: Որ պտտած էր Գաղիոյ եւ Գերմանիոյ հանքային ջուրերը, առանց մեծ բան մը շահելու: Հանրահռչակ են, ամբողջ Արեւելքի համար, այդ կարգի, ինչպէս ամէն կարգի հիւանդութեանց համար Պրուսայի ջերմուկները: Զունիմ առարկութիւն, թէ եւ դառնօրէն դատեր եմ, սանկ լման տասը տարի, անկարողութիւնը այդ ջուրերուն, քանի որ աղքատի մանչուկի իմ մենաշնորհս էր մեռելները մոմով գերեզման առաջ-